ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Որոշում 43
11.12.2012թ

2013թ.- ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 7 - րդ , 8- րդ ,9- րդ ,10- րդ և 11 - րդ հոդվածների պահանջներով :

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Վանաշեն համայնքի 2013թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի , շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական շինարարության / տեղադրման 1 թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար.

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10 000 / տաս հազար / դրամ :

բ/ սույն կետի << ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բ.ա/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20 000 / քսան հազար / դրամ :

բ.բ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30 000 / երեսուն հազար / դրամ :

բ.գ/ 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 / հիսուն հազար/ դրամ:

գ/ ոչ հիմնական շինությունների համար
գ.ա/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000/երեք հազար / դրամ
գ/ բ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 / հինգ հազար դրամ /

2/ Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման ասրդիականացման , վերականգնման աշխատանքների բացառությամբ ՀՀ օրենսդրոնթյամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի / համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով .

ա/ չի նախատեսվում կցակառույցների , բերնակառույցների , շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000 / երեք հազար / դրամ

բ/ Բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման , արդիականացման վերականգնման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանվծ դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1- ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով :

գ/Նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա / շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , եթե այն համարվում է նոր շինարարություն , ապա կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1 - ին կետով սահմանված նորմերը :

3/ Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 / հինգ հազար / դրամ : 4/ Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

ա/ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար է՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակ 3000 / երեք հազար / դրամ :

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակ 3000 / երեք հազար / դրամ :

5/ Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ :

բ/ Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար ՝ 150 000 դրամ:

6/ Համայնքի տարածքում ՝ առևտրի , հանրային սննդի օբյեկտները ,զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները / սաունաները / , խաղատները ժամը 24^{00}- ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝

ա/ Առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ

բ/հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար ՝ 50 000 դրամ

գ/ խաղատների համար՝ 500 000դրամ

դ/ շահումներով խաղերի կազմակերպման համար ՝ 250 000 դրամ

ե/ բաղնիքների / սաունաների/ համար ՝200 000 դրամ

զ/վիճակախաղերի կազմակերպման համար ՝ 100 000 դրամ

7/ Հանրային տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է ՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝1000 դրամ

բ/ թունդ ակոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ 2500 դրամ :

գ/ այլ արտաքին գովազդի համար ՝ 1500 դրամ :

դ/ դատարկ գովազդային վահանակների համար ՝ 700 դրամ

8/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար սահմանել 1000 դրամ:

9/Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ :

2. Սույն որոշման առաջին կետի /1-ին,2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցով:

3. Տեղական վճարներ

1/ Ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողերի հատկացման ,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում չափագրական աշխատանքների համար վճար 1000 դրամ :

2/Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար 1000 դրամ :

3/ա/Աղբահանության վճար սահմանել մեկ բնակելի միավորի համար ամսական 500 դրամ

բ/Անհատ ձեռնարկատերերի համար `1-2 աշխատողի դեպքում յուրաքանչյուրը 500 դրամ

3-10 աշխատողի դեպքում յուրաքանչյուրը 400 դրամ

10 և ավելիի դեպքում յուրաքանչյուրը 300 դրամ

գ/ Հիմնարկների համար / Միջն. դպրոց/-յուրաքանչյուր ամսվա համար 5000 դրամ

դ/Շինարարական և կենցաղային աղբակույտի տեղափոխման թույլտվության վճար սահմանել 1մ³-ի հաշվով 1000 դրամ :

1. ---------- կողմ Մ.Գրիգորյան

/ ստորագրություն/

2. . ---------- կողմ Ռ.Գրիգորյան

/ ստորագրություն /

3. ---------- կողմ Շ.Խալաթյան

/ ստորագրություն /

4. ---------- կողմ Հ.Նահապետյան

/ ստորագրություն /

Վանաշեն համայնքի ղեկավար՝ Ա.Գրիգորյան